Coca-Cola
Hellenic Bottling Company

Կաշառակերության դեմ քաղաքականություն

Coca-Cola
Hellenic Bottling Company

Բովանդակություն

Սույն քաղաքականության առարկան/կառավարումը/խորհրդատվություն ստանալը ____ էջ 1

Ֆինանսական ձևակերպումներ և փաստաթղթեր ____ էջ 2

Մենք երբեք չենք ներգրավվում կաշառակերության հետ կապված գործընթացներում ____ էջ 2

Հետապնդման բացառում ____ էջ 3

Ի՞նչ է կաշառքը ____ էջ 3

Կաշառքը պետական պաշտոնյաների հետ հարաբերություններում ____ էջ 4

Ո՞վ է «պետական պաշտոնյան» ____ էջ 4

Ի՞նչ է նշանակում կաշառել պետական պաշտոնյայի ____ էջ 5

Նվերներ և ժամանց առաջարկելը կամ ստանալը ____ էջ 10

Այցելություններ մեր տարածքներ և մեր արտադրանքի ցուցադրություններ.
հյուրընկալություն, ճանապարհորդություն և կեցություն ____ էջ 12

Պրեմիում կարգի իրադարձություններ ____ էջ 13

Լոբբինգ ____ էջ 13

Բարեգործական ներդրումներ ____ էջ 14

Քաղաքական ներդրումներ ____ էջ 15

Երրորդ անձանց ներգրավում - Ընդհանուր ____ էջ 15

Երրորդ անձանց ներգրավումը, ովքեր առնչվում են պետական պաշտոնյաների հետ.
նախնական համապատասխանության ստուգում և հաստատում ____ էջ 16

Երրորդ անձանց ներգրավումը, ովքեր շփվում են պետական պաշտոնյաների հետ.
Պայմանագրերի կնքում և հարաբերությունների մոնիտորինգ ____ էջ 17

Խախտումների վերաբերյալ հաղորդում ____ էջ 18

Գլխավոր գործադիր տնօրենի ուղերձը

Սիրելի թիմակից,

Մեր հաջողությունը կախված է մեր համայնքների բարգավաճումից: Կաշառակերությունն այդպիսի բարգավաճման ամենամեծ սպառնալիքներից մեկն է: Մենք այս հարցում շատ հստակ դիրքորոշում և դերակատարում ունենք. մենք ունենք զրո հանդուրժողականություն կաշառակերության և կաշառքի ցանկացած ձևի նկատմամբ:

Տեղյակ եմ, որ մենք գործում ենք բարդ շուկայական պայմաններում, որտեղ բիզնեսները երբեմն կարող են գայթակղվել կոռուպցիոն պրակտիկաներին մասնակցությամբ: Դա մեր ընտրությունը չէ և դա երբեք չի կարող արդարացում լինել մեր վարքագծի համար:

Կաշառակերության դեմ սույն քաղաքականությունը հաստատվել է Գործադիր Կոմիտեի, ինչպես նաև Խորհրդի կողմից, որը Աուդիտի և Ռիսկերի Հանձնաժողովի հետ համատեղ ընդհանուր պատասխանատվություն է կրում դրա կատարման ապահովման համար: Կաշառակերության դեմ պայքարի կանոններն արդեն հանդիսանում են մեր Գործարար Վարքագծի Կոդեքսի մի մասը: Այս հատուկ քաղաքականության իմաստը ձեզ ավելի մանրամասն գործնական խորհուրդներ տրամադրելն է, ինչը կօգնի ձեզ հայտնաբերել և կանխել կաշառակերությունն ու կոռուպցիան, որոնք հնարավոր է առնչվեն Coca-Cola ՀԲՔ-ին: Հատկապես կարևոր է, որ ձեզանից նրանք, ովքեր պարբերաբար գործ են ունենում պետական պաշտոնյաների հետ, կանոնավոր կերպով կարդան այս ուղեցույցը չափազանց ուշադիր:

Ուզում եմ հավաստիացնել ձեզ, որ դուք միայնակ չեք այս քաղաքականությամբ նկարագրված մարտահրավերների լուծման գործում: Կոռուպցիայի և կաշառակերության վերաբերյալ խնդիրները կարող են լինել բարդ և սթրեսներով լի: Ցանկացած հարցի կամ մտահոգության հետ կապված դուք միշտ պետք է ազատ զգաք դիմելու ձեր ղեկավարին՝ աջակցության համար և ձեր Էթիկայի և համապատասխանության հարցերով պատասխանատուին՝ խորհրդի համար:

Մենք բոլորս ուզում ենք հպարտություն զգալ այն համայնքի համար, որտեղ ապրում ենք, և այն աշխատավայրի համար, ուր ամեն օր գնում ենք աշխատանքի: Ազնվությունը մեր հիմնական արժեքներից մեկն է և մենք այն պետք է գործնականում կիրառենք և նպաստենք դրա զարգացմանը այն ամենի մեջ, ինչ անում ենք: Շնորհակալություն այս գործում ինձ միանալու համար:

Հարգանքով,

Զորան Բոգդանովիչ
Գլխավոր գործադիր տնօրեն

Coca-Cola
Hellenic Bottling Company

Սույն քաղաքականության առարկան/կառավարումը/խորհրդատվություն ստանալը

Coca-Cola ՀԲՔ-ի, ամբողջ աշխարհում ամբողջությամբ կամ մեծամասնությամբ դրան պատկանող կամ դրա կողմից վերահսկվող փոխկապակցված ընկերությունների (միասին՝ Ընկերություն) բոլոր աշխատողները, ղեկավարները, Գործադիր Կոմիտեի անդամներն ու տնօրենները պետք է զերծ մնան կաշառքի կամ կոռուպցիայի որևէ ձևի մեջ ներգրավվելուց՝ անկախ իրենց քաղաքացիությունից, բնակության կամ գտնվելու վայրից: Յուրաքանչյուր համատեղ ձեռնարկություն, որը վերահսկվում է Ընկերության կողմից, պետք է ընդունի նմանատիպ կաշառակերության դեմ քաղաքականություն: Այնտեղ, որտեղ մենք ունենք մեր մասնակցությունը, բայց չենք վերահսկում համատեղ ձեռնարկատիրական փոխհարաբերությունները, մենք խրախուսելու ենք մեր գործընկերներին հետևել Քաղաքականության պահանջներին մեր համատեղ ձեռնարկությունում:

Կիրառելի կաշառակերության դեմ օրենքները նաև արգելում են Ընկերության անունից հանդես եկող ցանկացած երրորդ անձանց, այդ թվում նաև՝ մատակարարների, դիստրիբյուտորների, գործակալների, խորհրդատուների և կապալառուների կողմից կատարված կոռուպցիոն վճարումները: Սա ներառում է նաև երրորդ անձանց կողմից ներգրավված ենթակապալառուները կամ խորհրդատուները, որոնք Ընկերության անունից աշխատանք են կատարում: Մեր մատակարարները, դիստրիբյուտորները, գործակալները, խորհրդատուները և կապալառուները նույնպես ենթակա են մեր Քաղաքականության սկզբունքների մեծ մասին՝ մեր Մատակարարների ուղեցույց սկզբունքների միջոցով:

Եթե հարցեր կամ մտահոգություններ ունեք, կարող եք դիմել գործընկերներին, մեր Էթիկայի և համապատասխանության հարցերով պատասխանատուներին ովքեր կարող են ուղղորդել ձեզ: Հաստատում պահանջող ցանկացած հարցում կամ ծանուցում պետք է ներկայացվի նրանց ԳՎԿ պորտալի միջոցով (հետևյալ հասցեով՝ www.coca-colahellenic.ethicspoint.com): Էթիկայի և համապատասխանության հարցերով պատասխանատուն, ում կարող եք դիմել՝ կախված ձեր զբաղեցրած պաշտոնից, հետևյալն է.

- Տվյալ երկրի աշխատակիցներ՝ տվյալ երկրի իրավաբանական բաժնի ղեկավար
- Խմբի ֆունկցիայի աշխատակիցներ՝ իրավաբանական համապատասխանության ղեկավար
- Գլխավոր տնօրեններ, Գործադիր ղեկավարության թիմի անդամներ, Տնօրենների խորհուրդ՝ Գլխավոր իրավախորհրդատու
- Գլխավոր գործադիր տնօրեն՝ Վերահսկողության և ռիսկի կառավարման հանձնաժողովի նախագահ

Միշտ կարող եք նաև խորհրդատվության համար դիմել ձեր անմիջական ղեկավարին:

Շատ կարևոր է, որ դուք մասնակցեք Ընկերության կողմից կազմակերպվող պարտադիր վերապատրաստման ծրագրերին, համոզված լինելու համար, որ դուք հասկանում եք կաշառակերության և կոռուպցիայի դեմ պայքարի կիրառելի բոլոր օրենքները և գործում այդ օրենքներին համապատասխան:

Ֆինանսական ձևակերպումներ և փաստաթղթեր

Սույն Քաղաքականության կանոններին համապատասխան, արժեք ներկայացնող որևէ բան տալու կամ ստանալու հետ կապված բոլոր վճարումները և ծախսերը պետք է ամբողջությամբ և ճշգրիտ կերպով գրանցվեն **Կաշառակերության դեմ ընդհանուր հաշվապահական հաշիվներում**՝ հաշվապահական հաշվառման գործող կանոններին համապատասխան: Ձեր տարածքային **Նվերների և ժամանցի քաղաքականության** մեջ կարող եք գտնել նաև բացատրություն, թե ինչպես են այդ կանոնները տարածվում նվերների և ժամանցի վրա:

Մենք երբեք չենք ներգրավվում կաշառակերության մեջ:

Ընկերությունը զրո հանդուրժողականության քաղաքականություն է կիրառում կաշառակերության, կոռուպցիայի կամ սույն Քաղաքականության խախտումների նկատմամբ:

Կաշառքն ու կոռուպցիան արգելված են օրենքով: Իրականում բոլոր ընդդատությունների շրջանակներում արգելված է տեղական կառավարության պաշտոնատար անձանց կաշառակերությունը. շատ ընդդատություններում արգելված է օտարերկրյա հանրային ոլորտի և մասնավոր ոլորտի պաշտոնյաներին կաշառք կամ առևտրային կաշառք առաջարկելը, որը նաև հայտնի է որպես շնորհակալություն (գումարի անօրինական հետ վերադարձ): Սույն Քաղաքականությունը պահանջում է հետևել բոլոր այդ օրենքներին: Կաշառքը և կոռուպցիան կարող են հանգեցնել Մեր ընկերության և ֆիզիկական անձանց համար կարևոր իրավական և հեղինակության հետ կապված ռիսկերի, այդ թվում նաև՝ զգալի տուգանքների և հնարավոր բանտարկության: Սույն Քաղաքականության խախտումը կամ Քաղաքականության խախտումների մասին չտեղեկացնելը, որոնց մասին դուք տեղյակ եք, կամ պետք է որ տեղյակ լինեիք, կհանգեցնի կարգապահական գործընթացի (այդ թվում մինչև աշխատանքից ազատման) և կարող է հաղորդվել իրավապահ մարմիններին, որոնք կարող են քրեական գործ հարուցել ձեր դեմ:

Coca-Cola
Hellenic Bottling Company

Հետապնդման բացառում

Ընկերությունը խստորեն կբացառի որևէ հետապնդումը կաշառակերությունից և կոռուպցիայից խուսափելու և սույն Քաղաքականությանը համապատասխան գործելու դեպքում: Ոչ մի աշխատող երբևէ չի պատժվի կատարողականի վերանայման, հատուցման կամ որևէ այլ միջոցով՝ կաշառք վճարելուց հրաժարվելու կամ Ընկերությանն առնչվող հնարավոր կաշառքի կամ կոռուպցիայի վերաբերյալ մտահոգությունների մասին տեղեկացնելու համար: Ինչպես նաև, բիզնեսի կատարողականը բացասաբար չի գնահատվի ձեր կողմից կաշառք վճարելու մերժման արդյունքում ուշացումների կամ ֆինանսական կորուստների պարագայում:

Ի՞նչ է կաշառակերությունը:

Կաշառակերություն (կաշառք տալ) նշանակում է **որևէ մեկին ուղղակի կամ անուղղակի կերպով որևէ արժեքավոր բան տալը, առաջարկելը, խոստանալը կամ տալու թույլտվություն տալը** , այդ թվում՝ որևէ առավելություն տալը, որը ստացող անձին կամ մեկ ուրիշին կդրդի կատարել որևէ ֆունկցիա կամ գործունեություն կամ անպատշաճ կերպով իրականացնել հայեցողությունը:

Օրինակ

Աշխատողը հաճախորդի ղեկավարին և նրա ընտանիքին տրամադրում է հանգստյան օրերի ճոխ ուղևորություն, որպեսզի ներգործի հաճախորդի վրա՝ մրցակցային վաճառքի գործընթացում Ընկերության օգտին գործելու համար:

Կաշառակերություն (կաշառք ստանալ) նշանակում է նաև **ուղղակի կամ անուղղակի կերպով որևէ արժեքավոր բան պահանջելը, ստանալ համաձայնվելը կամ ընդունելը**, ներառյալ՝ ցանկացած առավելություն, որը ձեզ կամ մեկ ուրիշին կդրդի կատարել որևէ ֆունկցիա կամ գործողություն կամ կիրառել հայեցողությունը անպատշաճ կերպով:

Օրինակ

Հաճախորդից, որի հետ բանակցում եք Ընկերության անունից, ձեր մոտ բարեկամներից մեկի համար պրակտիկայի հնարավորություն ստանալը:

Կաշառքը **կարող է լինել ցանկացած արժեքավոր բան** և կարող է ներառել գումար, փոխառություններ, ներդրումներ կամ նվիրատվություններ, նվերներ, ժամանց, ճանապարհորդություն, աշխատանքի առաջարկներ, վարձավճարներ, զեղչեր, անվճար արտադրանքներ, այլ ապրանքներ, ծառայություններ կամ ցանկացած այլ բան, որը կարելի է համարել արժեքավոր:

Օրինակ

Մեր սննդի մատակարարներից մեկը առաջարկում է անվճար հյուրասիրություն մեր արտադրատարածքների ղեկավարին՝ իր ծննդյան մասնավոր երեկույթի համար:

Կաշառքը կարող է նաև լինել «պարգևի» ձևով և վճարվել այն բանից հետո, երբ ստացողը անպատշաճ է կատարում իր պարտականությունը կամ պարտավորությունը:

Օրինակ

Պետական պաշտոնյային ֆուտբոլի թանկարժեք տոմսեր առաջարկելը՝ նրա կողմից մեր տարածքների համար թույլտվություն տալուց հետո:

Կաշառակերությունը պետական պաշտոնյաների հետ հարաբերություններում

Չնայած երբեք չպետք է որևէ մեկին կաշառք առաջարկեք կամ որևէ մեկից կաշառք ընդունեք, դուք պետք է առանձնահատուկ զգոն լինեք, որպեսզի չներգրավվեք պետական պաշտոնյաների հետ ոչ մի տեսակ կաշառակերության կամ ոչ պատշաճ գործարքների (ըստ ներքոշարադրյալի)։ Հնարավոր խնդիրներից խուսափելու համար, մեր կանոններն այն մասին, թե ինչը պետական պաշտոնյային առաջարկելը կարող է կաշառք դիտարկվել, երբեմն շատ ավելի խիստ են, քան մասնավոր անձանց համար։ Օրինակ, մեր Նվերների և Ժամանցի Քաղաքականությունը երբեմն ներառում է ավելի խիստ կանոններ պետական պաշտոնյաների հետ փոխհարաբերությունների համար՝ բիզնես գործընկերների հետ փոխհարաբերությունների համեմատությամբ (ըստ ներքոշարադրյալի)։ Բացի այդ, որոշ երկրներում տեղական օրենքներն արգելում են պետական պաշտոնյաներին երրորդ անձանցից որևէ բան ստանալու հնարավորությունը, նույնիսկ եթե դրա արժեքը խորհրդանշական է։ Դուք երբեք չպետք է որևէ բան առաջարկեք կամ տրամադրեք որևէ մեկին, եթե դա խախտում է տեղական օրենսդրությունը, նույնիսկ եթե այդ վարքագիծը այլ կերպ չի խախտում սույն Քաղաքականությունը։

Ո՞վ է պետական պաշտոնյան։

Պետական պաշտոնյայի սահմանումը կաշառակերության դեմ օրենքներում շատ լայն է։
Պետական պաշտոնյաներ, անկախ այն բանից՝ նշանակված են թե ընտրված, կարող են լինել հետևյալ անձինք.

- ազգային,պետական, մարզային կամ տեղական ինքնակառավարման մակարդակում պետական պաշտոն զբաղեցնող անձինք, այդ թվում՝ օրենսդիր մարմինների անդամները, գործադիր մարմինների պաշտոնյաները, վարչական մարմինների անդամները և դատական համակարգի անդամները, ովքեր նշանակված են կամ ընտրված.

- աշխարհի ցանկացած վայրում գործող պետական, կառավարությանն առընթեր կամ կառավարության կողմից վերահսկվող սուբյեկտի աշխատողները կամ ներկայացուցիչները, ներառյալ ինչպես բարձր, այնպես էլ ցածր մակարդակի աշխատողները։ Կառավարությանն առընթեր կամ կառավարության կողմից վերահսկվող սուբյեկտները ներառում են, բայց դրանցով չեն սահմանափակվում. կենտրոնական բանկերը, ինքնիշխան ներդրումային ֆոնդերը, պետական հիվանդանոցները, համալսարանները կամ ավիաընկերությունները, բարեգործական ձեռնարկությունները և ցանկացած այլ ձեռնարկություն, որը պատկանում է կամ վերահսկվում է կառավարական սուբյեկտի կողմից։ Կառավարության վերահսկողությունը կարող է իրականացվել բազմաթիվ եղանակներով և չի սահմանափակվում միայն այն իրավիճակներով, երբ բաժնետոմսերի մեծամասնությունը պատկանում է կառավարությանը.

- օտարերկրյա պետության, տարածքի, հանրային գործակալության կամ հասարակական ձեռնարկության համար հասարակական գործառույթ իրականացնող նշանակված կամ ընտրված անձինք,
- քաղաքական կուսակցությունների պաշտոնյաներն ու աշխատակիցները, քաղաքական պաշտոնի ցանկացած թեկնածու, կառավարության աշխատակիցները, ներառյալ նախարարությունների, պետական գործակալությունների, վարչական տրիբունալների և հասարակական խորհուրդների աշխատողները,
- պաշտոնատար անձինք, աշխատողները, անհատները և գործակալները, ովքեր աշխատում են հասարակական միջազգային կազմակերպություններում կամ հանդես են գալիս դրանց անունից, ինչպիսիք են՝ Համաշխարհային Բանկը, ՄԱԿ-ը, Միջազգային Արտարժույթի Հիմնադրամը, Եվրամիությունը և այլն,
- թագավորական ընտանիքի անդամները, և
- ցանկացած երեխա, ամուսին, ծնող, քույր և եղբայր կամ ընտանիքի որևէ այլ անդամ կամ այլ անձինք, ովքեր գործում են վերոնշյալ որևէ մեկի անունից:

Եթե կասկածներ ունեք, ապա պետք է խորհրդակցեք Էթիկայի և համապատասխանության հարցերով պատասխանատուի հետ:

Ո՞նչ է նշանակում պետական պաշտոնյայի կաշառակերությունը:

Կաշառք տալ է համարվում որևէ արժեքավոր բան կամ որևէ արտոնություն պետական պաշտոնյային կամ ի նպաստ նրան տալը կամ առաջարկելը՝ **նրա հայեցողությունից կախված որոշման վրա ազդելու համար**, օրինակ՝ պետական աուդիտի կամ ստուգման արդյունքները, կամ պարգևատրելու կամ գործարար հարաբերությունները շարունակելու կամ տուգանք նշանակելու մասին որոշումը:

Օրինակ
Ոստիկանության աշխատակցին գումար վճարելը՝ երթևեկության կանոնները խախտելու դեպքում տուգանքի կտրոն չտալու և մեր Ընկերության բեռնատարի համարները չհանելու համար:

Մեզ չի թույլատրվում կատարել փոքր չափի վճարումներ, որոնք երբեմն հայտնի են որպես արագացման վճարումներ կամ տալ այլ տեսակի առավելություններ պետական պաշտոնյաներին **՝թույլտվություն, լիցենզիա կամ այլ անհրաժեշտ հաստատում ձեռք բերելու համար**:

Օրինակ

Երբ ցանկանում եք կառուցել կամ ընդլայնել շինություն կամ ձեռք բերել գործունեության իրականացման թույլտվություններ (օրինակ՝ ջրի արդյունահանման համար), դուք պետք է հետևեք պաշտոնական ընթացակարգին և չպետք է կատարեք որևէ վճար, որքան էլ փոքր այն լինի, տեղական հանրային պաշտոնյային՝ թույլտվություն ստանալու կամ նրա վերանայման գործընթացն արագացնելու համար:

Չի թույլատրվում նաև կատարել արագացնող վճարումներ, այսինքն փոքր չափի վճարներ պետական պաշտոնյաներին՝ պարտադիր գործողությունները կամ ծառայություններն արագացնելու կամ դյուրացնելու համար, ինչպիսիք են կանոնավոր լիցենզիաների կամ բիզնես թույլտվությունների ստացումը կամ պետական փաստաթղթերի դիտարկումը, օրինակ՝ վիզաները և մաքսազերծումը: Այն փաստը, որ պետական պաշտոնյաները հայեցողության իրավունք չունեն և օրենքով պարտավոր են կատարել այդ գործողությունները կամ մատուցել այդ ծառայությունները, չի հանդիսանում արդարացում վճարումներ կատարելու կամ որևէ այլ արտոնություն տալու համար, որպեսզի նրանք **արագացնեն այդ գործընթացները:**

Օրինակ

Մաքսային աշխատողին կանխիկ դրամ կամ անվճար արտադրանք առաջարկելը՝ մեր արտադրանքի մաքսազերծումն արագացնելու համար:

Նաև պետք է անպայմանորեն հետևեք բոլոր **տեղական պահանջներին,** երբ մենք պայմանագրեր ենք կնքում պետական պաշտոնյաների հետ, իսկ, եթե կասկածներ ունեք, խորհրդակցեք ձեր էթիկայի և համապատասխանության հարցերով պատասխանատուի հետ:

Օրինակ

Ոստիկաններին որպես անվտանգության աշխատակիցներ աշխատանքի ընդունելը որոշ երկրներում օրինականորեն հնարավոր է, բայց պահանջվում է պատշաճ փաստաթղթավորում և ընթացակարգեր: Օրինակ, եթե գործարանի անվտանգության համար ոստիկան եք վարձում, հնարավոր է, անհրաժեշտ լինի նախօրոք գրանցել այդ պայմանավորվածությունը հասարակական կարգի պահպանությամբ զբաղվող համապատասխան նախարարությունում և պայմանագիր կնքել ոստիկանի գործատուի հետ:

Նկատի ունեցեք, որ, երբ ինչ-որ մեկը փորձում է **ներգործել պետական պաշտոնյայի վրա անուղղակի կերպով,** դա նույնպես կարող է համարվել կաշառք: Արտաքին պատկերն էական նշանակություն ունի Մի առաջարկեք, խոստացեք, տվեք կամ թույլտվություն տվեք որևէ մեկին որևէ արժեքավոր բան կամ արտոնություն տրամադրվի, եթե որոշակի հանգամանքների ներքո դա կարող է **ընկալվել** որպես պետական պաշտոնյայի վրա ազդելու փորձ: Այդ իրավիճակներում խորհրդակցեք ձեր էթիկայի և համապատասխանության հարցերով պատասխանատուի հետ:

Օրինակ

Նվիրատվություն մի կատարեք պետական պաշտոնյայի կողմից հովանավորվող բարեգործական միջոցառմանը՝ նրա քաղաքական առաջխաղացմանը օժանդակելու համար՝ դրա դիմաց ակնկալելով իր ղեկավարության կողմից բարենպաստ որոշման կայացում մեր աշխատանքներում սպասվող աուդիտի հետ կապված:

Մեր բիզնեսի գործունեության ո՞ր ոլորտներն են առանձնահատուկ ուշադրություն պահանջում:

Դուք պետք է հատկապես զգույշ լինեք և չվճարեք կամ տրամադրեք որևէ այլ արտոնություն պետական պաշտոնյային՝ հետևյալ իրավիճակների հետ կապված.

Երբ փորձում եք ձեռք բերել կամ արագացնել անհրաժեշտ պաշտոնական հաստատումների, թույլտվությունների կամ լիցենզիաների ստացումը:

Օրինակ

Մենք չենք կարողանում վերջնական հաստատում ստանալ շինության թույլտվության համար, թեև մենք ներկայացրել ենք իրավաբանորեն պահանջվող բոլոր փաստաթղթերը: Նախարարության աշխատողը լրացուցիչ վճար է խնդրում, որը օրենքով նախատեսված չէ՝ վերջնական հաստատումը տալու համար: Դուք պետք է անմիջապես մերժեք և հարցը բարձրացնեք էթիկայի և համապատասխանության հարցերով պատասխանատուի հետ,

Ստուգումների և տուգանքների հետ գործ ունենալիս, օրինակ՝ ստուգումից խուսափելու համար, ազդել ստուգման արդյունքների վրա կամ տուգանքից խուսափելու համար:

Օրինակ

Հասարակական առողջապահական տեսուչ է ժամանել Ընկերության արտադրական տարածք: Դուք չպետք է խոստանաք կամ առաջարկեք նրան որևէ արժեքավոր բան կամ որևէ արտոնություն, օրինակ՝ անվճար արտադրանք, **առանց ձեր էթիկայի և համապատասխանության հարցերով պատասխանատուի** գրավոր թույլտվության,

Մաքսատան աշխատողների հետ գործ ունենալիս՝ մաքսային գործընթացի միջոցով ապրանքների մաքսազերծումը ապահովելու կամ ապրանքների մաքսազերծումը ժամանակին կատարելու համար: Զգուշացեք, եթե մաքսային պաշտոնյան հարցնի՝ կցանկանայի՞ք արագացված գործընթաց, քանի որ դա կարող է լինել կաշառք խնդրելու այլ եղանակ:

Օրինակ

Չնայած, որ համոզված եք, որ ամեն ինչ կարգին է, մաքսատան պաշտոնյան պնդում է, որ ելակի շուտ փչացող հյութի բեռը մաքսազերծումը կատարելու համար բացակայում են որոշ կարևոր տեղեկություններ և, որ նա կարող է բացառություն կատարել լրացուցիչ 150 դոլարի դիմաց և անմիջապես բաց թողնել բեռը: Հակառակ դեպքում հյութը կփչանա: Այսպիսի հանգամանքներում դուք պետք է քաղաքավարի կերպով հրաժարվեք վճարելուց՝ մաքսազերծումը արագացնելու համար և նշեք, որ այդպիսի վճարումներ կատարելը հակասում է Ընկերության քաղաքականությանը: Հետագա քայլերի վերաբերյալ խորհրդակցեք ձեր էթիկայի և համապատասխանության հարցերով պատասխանատուի հետ, կամ

ձեր կամ Ընկերության այլ աշխատողի համար աշխատանքի թույլտվություններ, վիզաներ և գրանցում ստանալու համար: Երբեմն օգտակար է կապվել աշխատողի տեղական դեսպանատան հետ, ով փորձում է ձեռք բերել վիզան: Երբեմն դեսպանատունը կարող է օգնել: Պետք է զգուշանաք հավելավճար ստանալու խնդրանքներից՝ ընկերության աշխատողների կամ նրանց ընտանիքի անդամների համար վիզա տրամադրելու համար, ինչը կարող է կաշառք կորզելու միջոց լինել:

Օրինակ

Նոր նշանակված օտարերկրացի գլխավոր տնօրենն առանց աշխատանքի թույլտվության չի կարողանում իր ընտանիքը տեղափոխել իր նոր հյուրընկալող երկիր: Տեղական միգրացիոն ծառայության մարմինները հրաժարվում են նման թույլտվություն տրամադրել՝ մինչև նա չվճարի ոչ պաշտոնական հավելավճար աշխատանքի համար: Նույնիսկ եթե հետաձգումը զգալի դժվարություններ է առաջացնում, դուք պետք է քաղաքավարի կերպով բացատրեք, որ Ընկերության քաղաքականությունը չի թույլատրում այդպիսի հավելավճարների վճարումը, և անմիջապես հայտնեք դեպքի մասին ու քննարկեք ձեր հետագա քայլերը էթիկայի և համապատասխանության հարցերով պատասխանատուի հետ:

Ի՞նչ անել, եթե պետական պաշտոնյան կաշառք է պահանջում, կամ կասկածում եք, որ պահանջում է:

Դուք կարող եք հանդիպել պետական պաշտոնյայի, ով կաշառք է պահանջում, կամ նույնիսկ սպառնում է, որ կհետաձգի իր որոշումը կամ կկայացնի իր որոշումը Ընկերության շահերի դեմ, եթե դուք չկատարեք այդպիսի պահանջը:

Նման իրավիճակներից խուսափելու կամ այդ իրավիճակները արդյունավետ վերահսկելու համար կատարեք հետևյալը.

- տեղեկացված եղեք տեղական կանոններից ու կարգավորումներից, ինչպես նաև ժամանակացույցերից, որոնք պետք է հաշվի առնվեն, երբ. ձեռք եք բերում ցանկացած տեսակի հաստատում, թույլտվություն կամ լիցենզիա մաքսազերծման ձևակերպում իրականացնելու համար, աշխատանքի թույլտվություն, վիզա կամ գրանցում ստանալու կամ այլ գործընթացներ իրականացնելու համար: Պատրաստեք համապատասխան փաստաթղթերը պահանջված կարգով և բավականաչափ ժամանակ հատկացրեք, որպեսզի այս գործընթացները բնականոն հունով իրականացվեն
- անմիջապես և պարզ կերպով հայտարարեք, որ դուք չեք կարող և չեք վճարի կաշառք՝ որպես գործը առաջ տանելու միջոց,

համոզվեք, որ դուք լավ պատկերացում ունեք համապատասխան կարգավորող մարմնի կառուցվածքի մասին, որպեսզի անհրաժեշտության դեպքում պատրաստ լինեք դիմել ավելի բարձր պետական պաշտոնյաների՝ խնդիրը լուծելու համար կամ ընտրեք այլ գրասենյակներ, որոնք կաշառք չեն պահանջում,

աշխատեք տեղական առևտրի պալատի հետ և ներգրավեք մեր կազմակերպության շրջանակներում գործող այլ գերատեսչությունների և գործընկերների՝ խնդիրների առաջացման դեպքում լուծումները քննարկելու համար,

խնդրեք ուրիշներին ուղեկցել ձեզ: այլ անձանց ներկայությունը կարող է կանխել, որ պաշտոնյան կաշառք պահանջի

վճարեք միայն այն հարկերը, տուրքերը, տուգանքները կամ այլ վճարումները, որոնք պահանջվում են կիրառելի տեղական օրենսդրությամբ, կամ որոնք հաստատվել են ձեր էթիկայի և համապատասխանության պատասխանատուի կողմից, և վճարեք այդ բոլոր հարկերն ու վճարները անմիջականորեն համապատասխան պետական կառավարման կամ այլ գերատեսչությունների կողմից լիազորված ծառայությանը, այլ ոչ թե ցանկացած անհատական պետական պաշտոնյայի,

զգուշացեք երրորդ անձ հանդիսացող այն ծառայություններ մատուցողների հետ աշխատելուց, ովքեր հայտարարում են, որ կարող են լուծել մաքսային խնդիրները՝ իշխանությունների հետ ունեցած իրենց հարաբերությունների շնորհիվ. Coca-Cola ՀԲՔ-ի Կաշառակերության դեմ քաղաքականությունը չի թույլատրում կաշառք վճարել պետական պաշտոնյաներին Ընկերության համար աշխատող երրորդ անձանց միջոցով, անկախ նրանից՝ ուղղակի է դա արվում, թե անուղղակի,

ինչ-որ մեկին աշխատանքի ընդունելիս հարցրեք թեկնածուին, արդյոք նա պետական պաշտոնյա է կամ եղել է պետական պաշտոնյա, կամ կապ ունի որևէ պետական պաշտոնյայի հետ. եթե պատասխանը դրական է, ապա նախքան թեկնածուին աշխատանքի ընդունելը, դուք պետք է **ստանաք ձեր էթիկայի և համապատասխանության հարցերով պատասխանատուի գրավոր թույլտվությունը,** և

անհրաժեշտության դեպքում դիմեք խորհրդատվության և օգնության համար:

Եթե սպառնալիք է առաջանում, որը վտանգի է ենթարկում աշխատողի անձնական անվտանգությունը (օրինակ, եթե պետական պաշտոնյան զինված է և սպառնում է, կամ եթե անմիջապես պետք է կատարվի վճարում՝ որոշակի իրավիճակից կամ վայրից անվտանգ դուրս գալու համար), ապա վճարումը պետք է կատարվի առանց նախնական հաստատման, և դուք պետք է հնարավորինս շուտ հայտնեք վճարման մասին ձեր էթիկայի և համապատասխանության հարցերով պատասխանատուին: Այս հանգամանքով պայմանավորված ցանկացած վճար պետք է ճիշտ արձանագրվի Ընկերության մատյաններում և արձանագրություններում:

Նվերների և ժամանցի առաջարկում կամ ստացում

Այս բաժնում նշված է, թե ինչ է կարելի և ինչ չի կարելի նվերների և ժամանցի առաջարկների և ստանալու հետ կապված: Այն հավասարապես վերաբերում է հաճախորդների, դիստրիբյուտորների, մատակարարների, խորհրդատուների, կապալառուների, գործակալների և ներկայացուցիչների, այլ բիզնես գործընկերների (Բիզնես Գործընկերներ) և պետական պաշտոնյաների հետ գործարքներին:

Սա մեր կաշառակերության դեմ ծրագրի առավել հաճախ հանդիպող մասն է մեր ամենօրյա մասնագիտական կյանքում: Շատ դեպքերում միանգամայն օրինական է համեստ և համապատասխան նվերներ և ժամանց տալը և ստանալը: Յուրաքանչյուր երկրում մենք ներկայացրել ենք **Նվերների և ժամանցի քաղաքականություն (ներառյալ անվճար ապրանքներ ու սնունդ)**: Այդ քաղաքականության մեջ պարզաբանված է, թե երբ կարող եք ընթացք տալ առանց իրավաբանական հաստատման, և երբ, առաջարկվող նվերի կամ ժամանցի կամ այլ հանգամանքների դրամային արժեքի պատճառով, հարկավոր է ստանալ նախնական հաստատում ձեր էթիկայի և համապատասխանության հարցերով պատասխանատուից, կամ էլ պարզապես անհնար է ընթացք տալը:

Օրինակ

Տեղական հարկային մարմնի ղեկավարը, որտեղ հաշվառված է Ընկերությունը որպես հարկատու, Ընկերությունից խնդրում է անվճար ըմպելիքներ իր որդու ծննդյան տոնի համար: Դուք պետք է քաղաքավարի կերպով բացատրեք, որ Ընկերության քաղաքականության համաձայն՝ դուք իրավունք չունեք տրամադրել Ընկերության արտադրանքները նրան և անհապաղ հայտնեք այդ խնդրանքի մասին ձեր էթիկայի և համապատասխանության հարցերով պատասխանատուին:

Նույնիսկ թույլատրվելու դեպքում, նվերների ու ժամանցի համար պահանջվում են համապատասխան հաշվապահական փաստաթղթեր և դրանք պետք է ճշգրիտ կերպով գրանցվեն Ընկերության **Կաշառակերության դեմ ընդհանուր հաշվապահական հաշիվներում**՝ հաշվապահական հաշվառման գործող կանոններին համապատասխան:

Կան որոշակի կանոններ և ուղեցույցներ, որոնք կիրառվում են բոլոր հանգամանքներում.

երբեք մի տվեք և մի վերցրեք կանխիկ գումար հանդիսացող նվերներ որևէ մեկից՝ լինի դա ուղղակի, թե անուղղակի: Նույնը վերաբերվում է նաև կանխիկ գումարին համարժեք նվերներին, ներառյալ նվեր քարտերը,

երբեք մի համաձայնվեք ծախսերի օրական սահմանաչափ տրամադրելու հետ, փաստացի ծախսերը պետք է դիտարկվեն, և ըստ վերաբերելիության վճարվեն կամ փոխհատուցվեն (քանի որ հակառակ դեպքում դուք տալիս եք կանխիկ գումար հանդիսացող նվեր)

սնունդը, նվերները կամ ժամանցը, ինչպես նաև ճանապարհորդության և կեցության ծախսերը չպետք է չափազանց շատ լինեն և տվյալ հանգամանքներում պետք է լինեն ողջամիտ: Եթե կասկածներ ունեք այն մասին, թե արդյոք սնունդը, նվերը կամ ժամանցը չափազանց շատ են, միշտ խորհրդակցեք ձեր էթիկայի և համապատասխանության հարցերով պատասխանատուի հետ:

Օրինակ
Ընկերության ջրի արտադրության նոր գործարանի պլանավորված բացումից հետո գործարանի ղեկավարը չի կարող պետական պաշտոնյային և նրա գործընկերներին տանել քաղաքի ամենագեղեցիկ ռեստորանը, նույնիսկ, եթե այլ ընկերությունների համար դա արտասովոր բան չէ,

գործունեությունը պետք է կապված լինի հստակ բիզնես նպատակների հետ: Սովորաբար, միշտ պետք է լինի աշխատող, ով ներկա պետք է լինի ճաշկերույթի կամ ժամանցի միջոցառմանը:

Օրինակ
Գլխավոր տնօրենը չի կարող բիզնես գործընկերոջը տրամադրել ֆուտբոլի տոմսեր, եթե չկա օրինական բիզնես նպատակ, և, իրականում, նա չի պատրաստվում գնալ այդ խաղին կամ չի պահանջում այլ աշխատողից դա անել,

Պետական պաշտոնյաները չպետք է հրավիրվեն պրեմիում կարգի միջոցառումներին (օր.՝ օլիմպիական խաղերին կամ այլ մարզական կամ մշակութային միջոցառումներին),

երբեք մի առաջարկեք կամ ընդունեք հյուրընկալություն կամ ժամանց այն անձից, ով ի վիճակի է ազդել Ընկերության հետ կապված սպասվող և ընթացիկ հարցի վրա (օրինակ, եթե նա կարող է հաստատել ինչ-որ դիմում, անցկացնել ստուգում կամ ազդել պայմանագրային բանակցությունների, մրցույթների կամ մատակարարի ընտրության գործընթացների վրա): Նույնը վերաբերվում է ցանկացած հանգամանքի, որն առնչվում է կամ թվում է, թե առնչվում է այնպիսի պայմանավորվածության, որի շրջանակներում առաջարկվում է քաղաքավարություն՝ Ընկերությանը որոշակի օգուտ տալու դիմաց,

միշտ ուշադիր եղեք մեր Բիզնես Գործընկերների և պետական պաշտոնյաների՝ նվերներ և ժամանց ստանալու սեփական կանոնների նկատմամբ: Մի առաջարկեք նվերներ կամ ժամանց, որ գիտեք իրենց քաղաքականությունը թույլ չի տալիս: Նաև, եթե գործ ունեք պետական պաշտոնյաների հետ, ծանոթացեք պետական պաշտոնյաների վարքագիծը կարգավորող տեղական օրենսդրությանը: Ձեր էթիկայի և համապատասխանության հարցերով պատասխանատուն կարող է խորհուրդ տալ ձեզ այդպիսի իրավական պահանջների վերաբերյալ:

Օրինակ
Շատ հաճախորդներ և մատակարարներ արգելում են իրենց աշխատողներին համատեղ ճաշկերույթներ ունենալ բանակցությունների տարեկան գործընթացում,

Երբեք նվերներ կամ հրավերներ մի խնդրեք:

Օրինակ
Մի խնդրեք հանրահայտ սպորտային իրադարձությունը հովանավորող մատակարարին՝ ձեզ և ձեր ամուսնու/կնոջ համար տոմսեր ձեռք բերել, և

եթե ձեզ առաջարկվում է մի բան, որը խախտում է տեղական Նվերների և Ժամանցի քաղաքականության սկզբունքները, քաղաքավարի կերպով մերժեք և բացատրեք Ընկերության կանոնները: Եթե այն հանգամանքները, որոնց ներքո նվերը տրվել է, թույլ չեն տալիս դրա վերադարձը կամ գործնականում շատ դժվար են դարձնում, դուք պետք է տեղեկացնեք ձեր էթիկայի և համապատասխանության հարցերով պատասխանատուին: Որոշ դեպքերում նվերը վերադարձնելու փոխարեն ընդունելի կլինի կամ այն նվիրաբերել բարեգործական հիմնադրամին, կամ բաժանել աշխատողների միջև:

Օրինակ
Եթե կարևոր հաճախորդների հարցերով ղեկավարն իր հաճախորդից երեք շիշ շամպայն է ստանում, էթիկայի և համապատասխանության հարցերով պատասխանատուի հետ խորհրդակցելուց հետո նա կարող է բաժանել այդ շշերը իր թիմի մեջ չմտնող գործընկերների միջև, ովքեր աշխատանքային հարաբերություններ չունեն այդ հաճախորդի հետ:



Այցելություններ մեր արտադրական տարածքներ և մեր արտադրանքի ցուցադրություն. հյուրընկալություն, ճանապարհորդություն և կեցություն

Աշխատողները կարող են հրավիրել պետական պաշտոնյաներին կամ Բիզնես Գործընկերներին Ընկերության տարածքներ՝ այցելությունների կամ արտադրանքի ցուցադրությունների նպատակով: Ինչպես նաև, աշխատողները կարող են պետական պաշտոնյաներին կամ Բիզնես Գործընկերներին հրավիրել հյուրասիրության և ապահովել ճամփորդության ու կեցության ողջամիտ պայմաններով՝ օրինական բիզնես նպատակների համար: Աշխատողները կարող են նաև ստանալ հրավերներ մեր Բիզնես Գործընկերներից նմանատիպ միջոցառումների համար:

Կարող եք վճարել կամ փոխհատուցում ստանալ **ողջամիտ և արդարացված ծախսերի համար**, ինչպիսիք են սննդի ծախսերը, որոնք կատարվել են պետական պաշտոնյայի կամ Բիզնես Գործընկերոջ կողմից կամ նրա համար աշխատանքային այցի ընթացքում, պայմանով, որ բոլոր ընդհանուր պահանջները (ներառյալ՝ նվերների կամ սննդի համար, **նախնական թույլտվության** և ձեր Նվերների և ժամանցի քաղաքականության շրջանակներում համապատասխան փաստաթղթերի համար) պահպանվել են, ինչպես նաև պայմանով, որ.

այդպիսի գործողությունները և այդ ծախսերն ուղղակիորեն կապված են օրինական բիզնես նպատակների հետ, ինչպես օրինակ՝ Ընկերության արտադրանքը գովազդելը, ցուցադրելը կամ բացատրելը կամ Ընկերության տարածքներ այցելություններ կատարելը,

նման ծախսերի համար ձեռնարկությունների կողմից վճարումը լայնորեն ընդունված է, սովորաբար կիրառվում է և թույլատրվում է տեղական օրենսդրությամբ և մեր տեղական **Նվերների և ժամանցի քաղաքականությամբ,**

դուք չեք համաձայնվում այդ միջոցառումը կամ դրա փոխհատուցումը գաղտնի պահել այցելուի կամ պետական պաշտոնյայի գործատուից,

ճանապարհորդության և կեցության ծախսերը վճարվում են միայն Ընկերության կողմից, և ուղղակիորեն երրորդ անձ ծառայություն մատուցողներին, ովքեր ապահովում են ճանապարհորդության և կեցության տրամադրումը: Երբ ուղղակիորեն վճարումն այդ երրորդ անձ ծառայություն մատուցողներին հնարավոր չէ, ապա վճարումը կարող է կատարվել անհատի կամ պետական պաշտոնյայի գործատուին, բայց երբեք չի կարող կատարվել ուղղակիորեն անհատին կամ պետական պաշտոնյային, և

նույնիսկ, եթե դուք կարող եք վճարել կամ փոխհատուցում ստանալ այդպիսի ծախսերի համար, Ընկերությունը երբեք կանխիկ դրամով չի վճարելու աշխատողներին՝ այդ ծախսերը հոգալու համար, և դուք երբեք չպետք է կանխիկ դրամ ստանաք կամ փոխհատուցում ստանաք ձեր ծախսերի դիմաց:

Պրեմիում կարգի իրադարձություններ

Լոկալ Նվերների և ժամանցի քաղաքականությունը վերաբերում է բոլոր միջոցառումներին: Այնուամենայնիվ, որոշ դեպքերում, պրեմիում կարգի միջոցառումների համար գործում են հատուկ կանոններ (օրինակ՝ օլիմպիական խաղերը կամ այլ մարզական կամ մշակութային միջոցառումները): Խնդրում ենք հաշվի առնել այդպիսի հատուկ ուղեցույցը, երբ կիրառելի է: Ձեր էթիկայի և համապատասխանության հարցերով պատասխանատուն կարող է ցույց տալ ձեզ համապատասխան կանոնը և խորհուրդ տալ, թե ինչպես կիրառել այն ձեր հանգամանքներում: Նմանատիպ զգուշություն պետք է ցուցաբերեք և քննարկեք ձեր էթիկայի և համապատասխանության հարցերով պատասխանատուի հետ, եթե որևէ բիզնես գործընկերոջ կողմից հրավիրվեք պրեմիում կարգի միջոցառման: Ինչպես նշվեց վերևում, պետական պաշտոնյաները չպետք է հրավիրվեն պրեմիում կարգի միջոցառումներին, և այդպիսի միջոցառումներին մասնակցելու, ճանապարհորդության և կեցության համար նախատեսված ծախսերը միշտ պետք է կրեն իրենց գործատուները:

Լոբբինգ

Դուք պետք է **նախնական գրավոր թույլտվություն** ստանաք ձեր էթիկայի և համապատասխանության հարցերով պատասխանատուից նախքան լոբբինգի որևէ պայմանավորվածության մեջ ներգրավվելը: Ձեր էթիկայի և համապատասխանության հարցերով պատասխանատուն կօգնի ձեզ ապահովել, որ մենք հետևենք լոբբինգի վերաբերյալ օրենքների, կանոնակարգերի կամ քաղաքականության պահանջներին, ինչպես նաև տեղական գրանցման և հաշվետվության պահանջներին: Լոբբինգի բոլոր պայմանավորվածությունները պետք է ամբողջությամբ փաստաթղթավորված լինեն և ներառեն պահպանման հստակ և մանրամասն համաձայնագրերը, լոբբիստի հաշիվ-ապրանքագրերը և աշխատանքի արդյունքի վերաբերյալ փաստաթղթերը: Մի ներգրավեք լոբբիստներին, քանի դեռ չեք կատարել երրորդ անձի համապատասխանության ստուգումներ (տես ստորև):
Մենք իրավունք չունենք աշխատանքի ընդունել ծառայության մեջ գտնվող որևէ պետական պաշտոնյայի կամ նրա հարազատներից որևէ մեկին՝ Ընկերության անունից լոբբիստական կամ քաղաքական շահերի պաշտպանության գործողություններ իրականացնելու համար:

Բարեգործական ներդրումներ

Գլխավոր տնօրեններն ու Գործադիր Կոմիտեի անդամները լիազորված են բարեգործական ներդրումներ կատարելու (տես մեր Կորպորատիվ ներդրումների քաղաքականությունը)։ Այնուամենայնիվ, բարեգործական ներդրումները թույլատրվում են միայն այն դեպքում, եթե.

- ստացող բարեգործական հիմնադրամը բարեխիղճ ընկերություն է, որը որպես այդպիսին կարգավորվում և վերահսկվում է ըստ ընդդատության,
- պատճառ չկա հավատալու, որ բարեգործական ընկերությունն ինքնին կարող է **գործել ուղղակի կամ անուղղակի կերպով պետական պաշտոնյայի մասնավոր շահի համար,** և
- նման ծախսերին վերաբերող բոլոր համապատասխան գրառումները պահվում և արձանագրվում են Կաշառակերության դեմ ընդհանուր հաշվապահական հաշիվներում։

Եթե որևէ պետական պաշտոնյա հանդիսանում է բարեգործական հիմնադրամի տնօրեն կամ պատասխանատու անձ, կամ այլ կերպ սերտորեն կապված է բարեգործական ընկերության հետ, կամ խնդրում է, որ Ընկերությունը նվիրատվություն կատարի բարեգործական հիմնադրամին, ապա դուք պետք է գրավոր կերպով տեղեկացնեք ձեր էթիկայի և համապատասխանության հարցերով պատասխանատուին։ Նա իր հերթին խորհուրդ կտա ձեզ հետաքրքրող հարցումների կամ այլ ընթացակարգերի վերաբերյալ, որոնք մեզ անհրաժեշտ են վստահության բարձր մակարդակով որոշելու համար, թե արդյոք տվյալ ներդրումը թույլատրելի է։



Քաղաքական ներդրումներ

Հարկավոր է **նախնական գրավոր թույլտվություն** ստանալ Ընկերության տնօրենների խորհրդից՝ նախքան Ընկերության անունից քաղաքական ներդրում թույլատրելը կամ կատարելը: Նման ծախսերին վերաբերող բոլոր գրառումները պետք է պահվեն և արձանագրվեն Կաշառակերության դեմ ընդհանուր հաշվապահական հաշիվներում:

Երրորդ անձանց ներգրավում - Ընդհանուր

Ընկերությունը կարող է **պատասխանատվության** ենթարկվել Ընկերության անունից գործող ինչ-որ մեկի կողմից վճարված կաշառքների համար կամ **Ընկերության համար ծառայություններ մատուցող ինչ-որ մեկի** կողմից վճարված կաշառքների համար: Ուստի, մենք չպետք է **երբեք թույլ տանք կամ խնդրենք որևէ երրորդ անձի կաշառք ստանալ կամ վճարել որևէ բիզնես գործընկերոջ կամ պետական պաշտոնյայի**, նաև չպետք է անտեսենք Ընկերության անունից գործող երրորդ անձանց գործունեությունը, որը կարող է հակասել սույն Քաղաքականությանը:

Երրորդ անձանց օրինակներ

հաճախորդներ, դիստրիբյուտորներ, մատակարարներ, գործակալներ, ներկայացուցիչներ, խորհրդատուներ, այլ միջնորդներ, կապալառուներ և ծառայություն մատուցողներ, անշարժ գույքի կապալառուներ, վաճառքի և շուկայավարման ֆիրմաներ, հարկային խորհրդատուներ, լոբբիստներ:

Դուք պետք է հայտնեք ձեր էթիկայի և համապատասխանության հարցերով պատասխանատուին երրորդ անձանց մասին, ովքեր հավակնում են կամ արդեն մատուցում են ծառայություններ Ընկերության համար (ոչ թե պարզապես ապրանքներ է գնում և վերավաճառում առանց Ընկերության հետագա ներգրավման), այնպիսի վարքագծի մասին, որը ըստ ձեզ խախտում է սույն Քաղաքականությունը:

Օրինակ

Դուք տեղյակ եք, որ մեր գործարանի շենքի թույլտվություն ստանալու համար Ընկերությունը ներկայացնող խորհրդատուն հրավիրում է պետական պաշտոնյաներին շքեղ ճաշկերույթների և ժամանցի, և սովորություն ունի նրանց հարազատներին աշխատանքի ընդունելու՝ կարգավորողների հետ լավ հարաբերություններ հաստատելու համար:

Երրորդ անձանց ներգրավումը, ովքեր առնչվում են պետական պաշտոնյաների հետ. Նախնական համապատասխանության ստուգում և հաստատում

Եթե դուք այն երրորդ անձի հետ պայմանագրի՝ բիզնեսի մասով պատասխանատուն եք, **որը կարող է Ընկերության անունից շփվել պետական պաշտոնյաների հետ,** ապա դուք պատասխանատու կլինեք այդ երրորդ անձի հետ ընդհանուր հարաբերությունների համար՝ այդ երրորդ անձի ընտրության դիտարկումից մինչև նրա ներգրավվածության ավարտը: Այսպիսով, դուք պետք է համոզվեք, որ պատշաճ համապատասխանության ստուգում է իրականացվել և ձեր էթիկայի և համապատասխանության հարցերով պատասխանատուից ստացել եք **նախնական գրավոր թույլտվություն** նախքան երրորդ անձին ներգրավելը:

Կաշառակերության դեմ համապատասխանության ստուգումն այն անձանց համար, ովքեր Ընկերության անունից կարող են շփվել պետական պաշտոնյաների հետ, բոլոր դեպքերում պետք է իրականացվի Exiger հարթակի միջոցով հետևյալ հասցեով՝ [https://insight.exiger.com/Auth/Login], որը պետք է պարզի՝ արդյոք այդ կողմը բարձր ռիսկայնության դաշտում է, նախկինում մեղադրվել է ոչ պատշաճ գործարար վարքագծի համար, թե ոչ և այլն: Եթե Exiger հարթակում ցանկացած նախազգուշացնող նշաններ իր հայտ գան, դուք պետք է խորհրդակցեք ձեր էթիկայի և համապատասխանության հարցերով պատասխանատուի հետ: Այս համապատասխանության ստուգումները պետք է թարմացվեն երկու տարին մեկ անգամ:

Օրինակ

Տեղական մարդկային ռեսուրսների բաժինը օգտվում է մի ընկերության ծառայություններից՝ աշխատանքի թույլտվություններ ստանալու համար: Մարդկային ռեսուրսների բաժնից տվյալ փոխհարաբերությունների համակարգողը միանձնյա պատասխանատուն է համապատասխանության ստուգումն իրականացնելու համար: Եթե նա հարցեր ունի գործընթացի կամ Exiger հարթակի հետ կապված, ապա նա պետք է դիմի էթիկայի և համապատասխանության հարցերով պատասխանատուի օգնությանը:

Երրորդ անձանց ներգրավումը, ովքեր շփվում են պետական պաշտոնյաների հետ. Պայմանագրերի կնքում և փոխհարաբերությունների մոնիտորինգ



Հարաբերությունների համար բիզնես պատասխանատուն պետք է համոզվի, որ միջնորդի հետ կնքված պայմանագիրը հստակ և մասնավորապես նկարագրում է միջնորդի կողմից մատուցվող ծառայության տեսակը, որ այդ ծառայությունը մատուցվում է տեսանելի կերպով և, որ համապատասխան փոխհատուցումը համամասն է միջնորդի կողմից տվյալ վայրում մատուցած ծառայությանը: Բացի այդ, բիզնես հարաբերությունների սեփականատերը պետք է միջնորդի հետ պայմանագրում ներառելու համար էթիկայի և համապատասխանության հարցերով պատասխանատուից ստանա դրույթներ, որտեղ նշված կլինեն, որ հակառակ կողմը ներգրավված չէ և չի լինի կաշառակերության մեջ: Անհրաժեշտության դեպքում Իրավաբանական և Գնումների բաժինները կաջակցեն ձեզ, բայց որպես գործնական հարաբերությունների կոնտակտային անձ՝ վերջին հաշվով դուք եք պատասխանատվություն կրում ձեր կողմից վերահսկվող երրորդ անձի վարքագիծը գնահատելու համար և մտահոգությունները ձեր էթիկայի և համապատասխանության հարցերով պատասխանատուի մոտ բարձրացնելու համար:

Պետք է ուշադրություն դարձնել այն նշանների վրա, որոնք ցույց են տալիս, որ կողմը կարող է սույն Քաղաքականությունը չպահպանելու ռիսկի տակ լինել, օրինակ.

- երրորդ անձը պահանջում է անհամաչափ, հաջողության վրա հիմնված կամ տոկոսային փոխհատուցում,
- երրորդ անձը պահանջում է վճարման ոչ պատշաճ մեթոդ (օր.՝ այլ երկրում վճարվող անուղղակի վճարումներ, կանխիկ վճարումներ կամ վճարումներ որևէ առնչություն չունեցող երրորդ անձի հաշվին),
- երրորդ անձը չի ցանկանում պայմանագիր կնքել,
- երրորդ անձը ձեզ առաջարկվել է որևէ պետական պաշտոնյայի կողմից,
- երրորդ անձը, կարծես, համապատասխան փորձ չունի տվյալ խնդրին առնչվող հարցում,
- Երրորդ անձըն արտասովոր արագ արդյունքներ է խոստանում, կամ
- Երրորդ անձը լրացուցիչ վճարումներ կամ նվերներ է պահանջում:

Եթե դուք առնչվում եք վերը նշվածներից որևէ դեպքի հետ, ապա պետք է առանց հապաղման հարցը բարձրացնեք ձեր էթիկայի և համապատասխանության հարցերով պատասխանատուի մոտ:

Խախտումների մասին հաղորդում

Եթե նկատում եք այնպիսի վարքագիծ, որը կարող է խախտել սույն Քաղաքականությունը, կամ ձեզ մոտեցել են կաշառքի կամ կոռուպցիայի նպատակներով, դիմեք ձեր էթիկայի և համապատասխանության հարցերով պատասխանատուին կամ օգտվեք Speak Up! գծից, որը հասանելի է անանուն կերպով հետևյալ հասցեով՝ www.coca-colahellenic.ethicspoint.com: Կասկածելի խախտումները կդիտարկվեն և կհետաքննվեն համապատասխան ձևով և կարող են հանգեցնել կարգապահական միջոցների կիրառման: Այդպիսի հաղորդումները կդիտարկվեն որպես գաղտնի՝ օրենքով թույլատրելի սահմաններում: Սույն Քաղաքականության խախտումների մասին չտեղեկացնելը հանդիսանում է սույն Քաղաքականության և Գործարար Վարքագծի Կոդեքսի առանձին խախտում, որը ենթակա է կարգապահական միջոցների կիրառմանը՝ ընդհուպ մինչև և ներառյալ աշխատանքից հեռացումը:

Քաղաքականության լուրջ բնույթի կասկածելի խախտումների մասին, որտեղ ներգրավված են բարձրաստիճան ղեկավարներ, խոշոր չափի գումարներ կամ ենթադրյալ հանցավոր գործունեություններ, անհապաղ պետք է զեկուցվի Գլխավոր իրավախորհրդատուին կամ Համապատասխանության հարցերով գլխավոր տնօրենին:

Coca-Cola